

**Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի նոյեմբերի 4-ի 2003/88/ԵՀ  
հրահանգ**

**Աշխատաժամերի կազմակերպման որոշ հայեցակետերի մասին  
(Պաշտոնական տեղեկագիր, L 299 18.11.2003թ., էջեր 0009 – 0019)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և,  
մասնավորապես, դրա 137(2) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի  
եզրակացությունը (1),

խորհրդակցելով Տարածաշրջանների հարցերով կոմիտեի հետ,

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան (2),

Քանի որ

1) «Աշխատաժամերի կազմակերպման հետ կապված որոշ հայեցակետերի մասին»  
Խորհրդի 1993 թվականի նոյեմբերի 23-ի 93/104/ԵՀ հրահանգը (3), որով սահմանվում են  
աշխատաժամերի կազմակերպման՝ անվտանգության ու առողջապահական նվազագույն  
պահանջները՝ ամենօրյա հանգստի ժամանակահատվածների, ընդմիջումների,  
ամենշաբաթյա հանգստի, շաբաթական առավելագույն աշխատաժամանակի, ամենամյա  
արձակուրդի, ինչպես նաև գիշերային աշխատանքի, հերթափոխային աշխատանքի,  
աշխատանքային մոդելների հայեցակետերի առումով, զգալիորեն փոփոխվել են:  
Խնդիրների պարզաբանման նպատակով անհրաժեշտ է նախատեսել տվյալ դրույթների  
կոդիֆիկացում,

2) Պայմանագրի 137-րդ հոդվածով նախատեսվում է, որ Համայնքը պետք է օժանդակի և  
լրացնի անդամ պետությունների գործողությունները՝ աշխատողների առողջության և  
անվտանգության պահպանման նպատակով աշխատանքային միջավայրի բարելավման  
համար: Այդ հոդվածի հիման վրա հրահանգներ ընդունելիս պետք է խուսափել այնպիսի

վարչական, ֆինանսական և իրավաբանական սահմանափակումներ սահմանելուց, որոնք կխոչընդոտեն փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծումն ու զարգացումը,

3) «Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության բարելավմանն ուղղված միջոցների ներմուծման մասին» Խորհրդի 1989 թվականի հունիսի 12-ի 89/391/ԵՏՀ հրահանգի (4) դրույթները շարունակվում են ամբողջությամբ կիրառվել սույն Հրահանգով կարգավորվող ոլորտների նկատմամբ՝ չհակասելով դրա առավել խիստ և (կամ) հատուկ դրույթներին,

4) աշխատավայրում աշխատողների անվտանգության, հիգիենայի և առողջապահական նորմերի ապահովման բարելավումը մի նպատակ է, որը չպետք է զուտ տնտեսական նկատառումներից ավելի ցածր դասվի,

5) բոլոր աշխատողները պետք է ունենան հանգստի բավարար ժամանակահատվածներ: «Հանգիստ» հասկացությունը պետք է արտահայտվի ժամանակի միավորներով, այն է՝ օրերով, ժամերով և (կամ) դրանց բաղադրիչներով: Համայնքի աշխատողներին պետք է տրվեն հանգստի առնվազն ամենօրյա, ամենշաբաթյա և ամենամյա ժամանակահատվածներ ու բավարար ընդմիջումներ: Այս համատեքստում անհրաժեշտ է նաև սահմանել ամենշաբաթյա աշխատաժամերի առավելագույն սահման,

6) հաշվի պետք է առնվեն Աշխատանքի միջազգային կազմակերպության աշխատաժամերի, այդ թվում՝ գիշերային աշխատաժամերի կազմակերպմանը վերաբերող սկզբունքները,

7) ուսումնասիրությամբ ցույց է տրվել, որ մարդու օրգանիզմը գիշերվա ընթացքում առավել զգայուն է շրջակա միջավայրի խաթարումների նկատմամբ, և որ աշխատանքի կազմակերպման որոշ ծանր տեսակները, ինչպես նաև երկարատև գիշերային աշխատանքը կարող է վնասակար ազդեցություն ունենալ աշխատողների առողջության վրա և կարող է վտանգել աշխատավայրի անվտանգությունը,

8) անհրաժեշտություն կա սահմանափակել գիշերային, այդ թվում՝ արտաժամյա աշխատանքի տևողությունը և նախատեսել, որպեսզի պարբերաբար գիշերային ժամերին աշխատողների ծառայությունից օգտվող գործատուները սույն տեղեկատվությունը ներկայացնեն իրավասու մարմինների ուշադրությանը՝ վերջիններիս կողմից պահանջի դեպքում,

9) կարևոր է, որ գիշերային ժամերին աշխատողներին՝ նախքան նրանց նշանակումը և դրանից հետո, պարբերաբար առողջական վիճակի անվճար գնահատման ենթարկվելու

իրավունք տրվի, և եթե նրանք առողջական խնդիրներ ունեն, հնարավորության դեպքում փոխադրվեն իրենց համապատասխան ցերեկային աշխատանքի,

10) գիշերային ժամերին և հերթափոխով աշխատողների դեպքում պահանջվում է, որպեսզի անվտանգության և առողջապահական նորմերի պահպանությունը հարմարեցվի նրանց աշխատանքի բնույթին և որ պաշտպանության ու կանխարգելման ծառայությունների և ռեսուրսների կազմակերպումն ու դրանց աշխատանքն արդյունավետ լինի,

11) հատուկ աշխատանքային պայմանները վնասակար ազդեցություն կարող են ունենալ աշխատողների անվտանգության և առողջության վրա: Որոշակի մոդելի համաձայն՝ աշխատանքի կազմակերպման ժամանակ պետք է հաշվի առնվի աշխատանքը աշխատողի կարիքներին հարմարեցնելու հիմնական սկզբունքը,

12) «Ծովագնացների աշխատաժամանակի վերաբերյալ» Եվրոպական համաձայնագիրը գործողության մեջ է դրվել Պայմանագրի 139(2) հոդվածի վրա հիմնված՝ «Ծովագնացների աշխատաժամերի կազմակերպման մասին Եվրոպական համայնքի նավի սեփականատերերի ասոցիացիայի, ինչպես նաև Տրանսպորտի ոլորտում աշխատողների՝ Եվրոպական միությունում գործող միությունների ֆեդերացիայի հետ կնքված համաձայնագրի մասին» Խորհրդի 1999 թվականի հունիսի 21-ի 1999/63/ԵՀ հրահանգի միջոցով (5): Համապատասխանաբար, սույն Հրահանգի դրույթները չպետք է կիրառվեն ծովագնացների նկատմամբ,

13) անդամ պետություններն իրենք պետք է սույն Հրահանգի համաձայն որոշում կայացնեն՝ աշխատողներ հանդիսացող «մասնաբաժին ունեցող ձկնորսներին» ամենամյա արձակուրդ տրամադրելու և դրանից օգտվելու իրավունք տալու պայմանների, ինչպես նաև վճարման հետ կապված պայմանավորվածությունների վերաբերյալ,

14) Համայնքի փաստաթղթերով, օրինակ, որոշ կատեգորիաների աշխատողների հանգստի ժամանակահատվածների, աշխատաժամանակի, ամենամյա արձակուրդի և գիշերային աշխատանքի մասով սահմանված հատուկ ստանդարտները պետք է գերակայեն սույն Հրահանգի դրույթների նկատմամբ,

15) ցանկալի է նախատեսել սույն Հրահանգի որոշ դրույթների կիրառման ճկունություն՝ հաշվի առնելով այն հարցերը, որոնք հավանական է, որ կարող են առաջանալ կազմակերպության ներսում աշխատաժամերի կազմակերպման հետևանքով՝ աշխատողների առողջության և անվտանգության պահպանման սկզբունքների հետ համապատասխանությունն ապահովելու արդյունքում,

16) ըստ դեպքի՝ անհրաժեշտ է ապահովել անդամ պետությունների կամ աշխատողների և գործատուների կողմից որոշ դրույթներից շեղումներ կատարելու հնարավորությունը: Որպես կանոն՝ շեղում կատարելու դեպքում համապատասխան աշխատողներին, որպես փոխհատուցում, պետք է հանգստի միևնույն տևողությամբ ժամանակահատվածներ տրվեն,

17) սույն Հրահանգը չպետք է ազդի անդամ պետությունների՝ I հավելվածի Բ մասով սահմանված հրահանգների փոխատեղման վերջնաժամկետների մասով պարտավորությունների վրա,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

## ԳԼՈՒԽ 1

### ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### Հոդված 1

#### **Նպատակը և գործողության ոլորտը**

1. Սույն Հրահանգով սահմանվում են աշխատաժամանակի կազմակերպման՝ անվտանգության և առողջապահական նվազագույն պահանջները:

2. Սույն Հրահանգը կիրառվում է՝

ա) ամենօրյա հանգստի նվազագույն ժամանակահատվածների, ամենշաբաթյա հանգստի և ամենամյա արձակուրդի, ինչպես նաև ընդմիջումների ու շաբաթական առավելագույն աշխատաժամանակի նկատմամբ և

բ) գիշերային աշխատանքի, հերթափոխային աշխատանքի և աշխատանքային մոդելների որոշ հայեցակետերի նկատմամբ:

3. Սույն Հրահանգը 89/391/ԵՏՀ հրահանգի 2-րդ հոդվածի իմաստով կիրառվում է գործունեության բոլոր՝ թե՛ պետական, թե՛ մասնավոր ոլորտների նկատմամբ՝ չհակասելով դրա 14-րդ, 17-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածներին:

Սույն Հրահանգը չի կիրառվում ծովագնացների նկատմամբ, ինչպես սահմանված է 1999/63/ԵՀ հրահանգով, և չի հակասում դրա 2(8) հոդվածին:

4. 89/391/ԵՏՀ հրահանգի դրույթներն ամբողջությամբ կիրառվում են 2-րդ պարբերության մեջ նշվածների նկատմամբ՝ չհակասելով սույն Հրահանգի առավել խիստ և (կամ) հատուկ դրույթներին:

## Հոդված 2

### Հասկացությունները

Սույն Հրահանգի նպատակներով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

1. «աշխատաժամանակ» նշանակում է ցանկացած ժամանակահատված, որի ընթացքում աշխատողն աշխատում է, գտնվում է գործատուի տնօրինության տակ և իրականացնում է իր գործունեությունը կամ պարտականությունները՝ ազգային օրենսդրությանը և (կամ) գործելակերպին համապատասխան.

2. «հանգստի ժամանակահատված» նշանակում է աշխատաժամանակից դուրս՝ ցանկացած ժամանակահատված.

3. «գիշերային ժամեր»՝ ազգային իրավունքով սահմանվածի համաձայն նշանակում է յոթ ժամից ոչ պակաս ցանկացած ժամանակահատված, որն ամեն դեպքում պետք է ներառի կեսգիշերից մինչև 05.00-ն ընկած ծամանակահատվածը.

4. «գիշերային ժամերին աշխատող» նշանակում է՝

ա) մի կողմից՝ ցանկացած աշխատող, ով գիշերային ժամերին, որպես կանոն, աշխատում է իր ամենօրյա աշխատաժամանակի առվազն երեք ժամը և

բ) մյուս կողմից՝ ցանկացած աշխատող, ով իր տարեկան աշխատաժամանակի որոշ չափաքանակը հնարավոր է լրացնի գիշերային ժամերին, որը համապատասխան անդամ պետության ընտրությամբ սահմանվում է՝

i) ազգային օրենսդրությամբ, աշխատողների և գործատուների հետ խորհրդակցելուց հետո կամ

ii) կոլեկտիվ համաձայնագրով կամ համաձայնագրերով, որոնք կնքվում են աշխատողների և գործատուների միջև՝ ազգային կամ տարածաշրջանային մակարդակով.

5. «հերթափոխային աշխատանք» նշանակում է հերթափոխային աշխատանքի կազմակերպման ցանկացած եղանակ, որի ժամանակ աշխատողները որոշակի, այդ թվում՝

հերթագայության կարգով, միմյանց հաջորդում են միևնույն աշխատանքային տարածքում, որը կարող է լինել շարունակական կամ ոչ շարունակական և որի արդյունքում անհրաժեշտություն է առաջանում, որ աշխատողներն աշխատեն տարբեր օրերի կամ շաբաթների որոշակի ժամանակատվածների ընթացքում.

6. «հերթափոխային աշխատող» նշանակում է ցանկացած աշխատող, ում աշխատանքային գրաֆիկը հերթափոխային աշխատանքի մի մասն է կազմում.

7. «շրջագայող աշխատող» նշանակում է ցանկացած աշխատող, ով զբաղված է, որպես ավտոճանապարհով, օդով կամ ներքին ջրուղիներով ուղևորների կամ բեռների փոխադրման ծառայություններ իրականացնող թռիչքային կամ ճանապարհորդական անձնակազմի անդամ.

8. «օֆշորային աշխատանք» նշանակում է օֆշորային կայանքներում (ներառյալ հորատման կայանները) իրականացվող՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանքային ռեսուրսների, այդ թվում՝ ածխաջրածինների հետախուզման, արդյունահանման կամ կիրառմանն առնչվող աշխատանք, ինչպես նաև գործունեության այդ տեսակների հետ կապված սուզման աշխատանք, անկախ այն հանգամանքից՝ դա կատարվել է օֆշորային կայանքից, թե նավից.

9. «բավարար հանգիստ» նշանակում է աշխատողներին պարբերաբար տրվող հանգստի ժամանակահատվածներ, որոնց տևողությունն արտահայտված է ժամանակի միավորներով և որոնք բավականաչափ երկարատև և շարունակական են՝ ապահովելու համար, որ աշխատողները հոգնածության կամ այլ անկանոն աշխատանքների հետևանքով չվնասեն իրենց, իրենց աշխատակիցներին կամ այլոց, ինչպես նաև չվնասեն իրենց առողջությանը թե՛ կարճաժամկետ, թե՛ երկարաժամկետ տևողությամբ

## ԳԼՈՒԽ 2

### ՀԱՆԳՍՏԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՆԵՐԸ. ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՅԼ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐ

#### Հոդված 3

##### **Ամենօրյա հանգիստը**

Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ ապահովելու համար յուրաքանչյուր աշխատողի՝ 24-ժամյա ժամանակահատվածի ընթացքում անընդմեջ 11 ժամից ոչ պակաս ամենօրյա հանգստի նվազագույն ժամանակի իրավունք ունենալը:

#### Հոդված 4

##### **Ընդմիջումները**

Անդամ պետություններն այն դեպքերում, երբ աշխատանքային օրը 6 ժամից ավելի տևողություն ունի, անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ ապահովելու համար, որպեսզի յուրաքանչյուր աշխատող հանգստի համար նախատեսված ընդմիջման իրավունք ունենա, որի վերաբերյալ մանրամասները, այդ թվում՝ տևողությունը և դրա տրամադրման պայմանները, պետք է սահմանվեն աշխատողների և գործատուների միջև կնքված կոլեկտիվ համաձայնագրով կամ համաձայնագրերով, կամ այլապես՝ ազգային օրենսդրությամբ:

#### Հոդված 5

##### **Ամենշաբաթյա հանգստի ժամանակահատվածը**

Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ ապահովելու համար, որ ամեն յոթ օրը մեկ անգամ յուրաքանչյուր աշխատող առնվազն 24 անընդմեջ ժամեր տևողությամբ հանգստի, ինչպես նաև 3-րդ հոդվածում նշված 11 ժամյա ամենօրյա հանգստի իրավունք ունենա:

24 ժամյա նվազագույն տևողությամբ հանգստի ժամանակահատվածը կարող է կիրառվել, եթե դա արդարացված է օբյեկտիվ, տեխնիկական կամ աշխատանքի կազմակերպման պայմաններով:

### *Հոդված 6*

#### **Շաբաթական առավելագույն աշխատաժամանակը**

Անդամ պետությունները, բավարարելով աշխատողների անվտանգության և առողջության պահպանման հետ կապված պահանջները, անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ ապահովելու համար, որպեսզի՝

ա) շաբաթական աշխատաժամանակի տևողությունը սահմանափակվի օրենքներով, կանոնակարգերով կամ վարչական ակտերով, կամ աշխատողների և գործատուների միջև կնքված կոլեկտիվ համաձայնագրերով և կամ աշխատողների ու գործատուների միջև կնքված համաձայնագրերով.

բ) յոթօրյա ժամանակահատվածում աշխատաժամանակի, այդ թվում՝ արտաժամյա աշխատանքի միջին տևողությունը չի գերազանցում 48 ժամը:

### *Հոդված 7*

#### **Ամենամյա արձակուրդը**

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ յուրաքանչյուր աշխատող ունենա առնվազն չորս շաբաթ տևողությամբ ամենամյա վճարվող արձակուրդի իրավունք՝ ազգային օրենսդրությամբ և (կամ) գործելակերպով սահմանված արձակուրդի իրավունքի և տրամադրման պայմանների համաձայն:

2. Ամենամյա վճարվող արձակուրդի նվազագույն տևողությունը չի կարող փոխարինվել գումարով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատանքային հարաբերություններն ավարտվել են:



### ԳԼՈՒԽ 3

## ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ – ՀԵՐԹԱՓՈԽԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ – ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐ

### Հոդված 8

#### **Գիշերային աշխատանքի տևողությունը**

Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ.

ա) գիշերային ժամերին աշխատողների աշխատանքի տևողությունը ցանկացած 24-ժամյա ժամանակահատվածում չգերազանցի միջինը ութ ժամը.

բ) գիշերային ժամերին աշխատողները, որոնց աշխատանքը ենթադրում է հատուկ վտանգներ կամ ծանր ֆիզիկական և կամ մտավոր լարվածություն, գիշերային աշխատանքի 24-ժամյա ցանկացած ժամանակահատվածում միջինը ութ ժամից ավելի չաշխատեն.

(բ) կետի նպատակներով՝ հատուկ վտանգներ կամ ծանր ֆիզիկական և կամ մտավոր լարվածություն ենթադրող աշխատանքը սահմանվում է ազգային օրենսդրությամբ և (կամ) գործելակերպով, կամ կոլեկտիվ համաձայնագրերով, կամ աշխատողների և գործատուների միջև կնքված համաձայնագրերով՝ հաշվի առնելով գիշերային աշխատանքի հատուկ հետևանքները և վտանգները:

### Հոդված 9

#### **Առողջական վիճակի գնահատումը և գիշերային ժամերին աշխատողների փոխադրումը ցերեկային աշխատանքի**

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ.

ա) գիշերային ժամերին աշխատողները, մինչև նրանց նշանակումը և դրանից հետո պարբերաբար ունենան առողջության վիճակի անվճար գնահատման իրավունք,

բ) եթե հաստատվի, որ գիշերային ժամերին աշխատողներն ունեն առողջական խնդիրներ, որոնք առաջացել են գիշերային աշխատանքի հետևանքով, ապա

գործատուն հնարավորության դեպքում նրանց փոխադրի իրենց համապատասխան ցերեկային աշխատանքի:

2. 1(ա) պարբերության մեջ նշված առողջության անվճար գնահատման ընթացքում պետք է պահպանվի բժշկական գաղտնիությունը:

3. 1(ա) պարբերության մեջ նշված առողջության անվճար գնահատումը կարող է իրականացվել առողջապահական ազգային համակարգի շրջանակներում:

#### *Հոդված 10*

### **Գիշերային ժամերին աշխատողներին տրվող երաշխիքները**

Ազգային օրենսդրության և (կամ) գործելակերպի համաձայն՝ անդամ պետությունները կարող են որոշակի երաշխիքներ տալ գիշերային ժամերին աշխատողների որոշ կատեգորիաների աշխատանքի համար այն աշխատողների դեպքում, որոնց անվտանգությունը կամ առողջությունը վտանգվում է գիշերային աշխատանքի հետևանքով:

#### *Հոդված 11*

### **Գիշերային ժամերին աշխատողների ծառայությունից պարբերաբար օգտվելու մասին ծանուցումը**

Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ գիշերային ժամերին աշխատողների ծառայություններից պարբերաբար օգտվող գործատուները դրա մասին տեղեկացնեն իրավասու մարմիններին՝ վերջիններիս կողմից պահանջի դեպքում:

#### *Հոդված 12*

### **Անվտանգության և առողջության պահպանումը**

Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ.

ա) գիշերային ժամերին աշխատող և հերթափոխով աշխատողներին տրամադրվի նրանց աշխատանքի բնույթին համապատասխան անվտանգության և առողջության պահպանություն.

բ) գիշերային ժամերին և հերթափոխով աշխատողների անվտանգության ու առողջության պատշաճ պահպանումը և դրանց հետ կապված՝ կանխարգելիչ ծառայությունները կամ միջոցները մյուս աշխատողների նկատմամբ կիրառվող ծառայություններին կամ միջոցներին համարժեք և մշտապես հասանելի լինեն:

### *Հոդված 13*

#### **Աշխատանքային մոդելը**

Անդամ պետությունները, այն դեպքում, երբ գործատուն մտադիր է աշխատանքը կազմակերպել որոշակի մոդելի համաձայն, ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ գործատուի կողմից հաշվի առնի աշխատանքն աշխատողին հարմարեցնելու հիմնական սկզբունքը՝ նպատակ ունենալով, մասնավորապես, մեղմացնելու միապաղաղ աշխատանքն ու աշխատանքի կատարման նախապես սահմանված արագությունը՝ կախված գործունեության տեսակից, անվտանգության և առողջության պահպանման պահանջներից՝ հատկապես աշխատաժամանակի ընթացքում ընդմիջումների մասով:

#### **ԳԼՈՒԽ 4**

#### **ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

### *Հոդված 14*

#### **Համայնքի ավելի կոնկրետ իրավական ակտերը**

Սույն Հրահանգը չի կիրառվում, եթե Համայնքի այլ փաստաթղթերում որոշ աշխատանքների կամ մասնագիտական գործունեությունների մասով աշխատաժամանակի կազմակերպման վերաբերյալ ներառված են ավելի կոնկրետ պահանջներ:

## Հոդված 15

### Առավել նպաստավոր դրույթները

Սույն Հրահանգով չի սահմանափակվում անդամ պետությունների՝ աշխատողների անվտանգության և առողջության պահպանման համար ավելի նպաստավոր օրենքներ, կանոնակարգեր կամ վարչական ակտեր կիրառելու կամ ներմուծելու և կամ աշխատողների անվտանգության ու առողջության պահպանման համար ավելի նպաստավոր կոլեկտիվ համաձայնագրերի կամ աշխատողների և գործատուների միջև կնքված համաձայնագրերի կիրառումը թույլատրելու կամ դրան նպաստելու իրավունքը:

## Հոդված 16

### Վկայակոչման ժամկետները

Անդամ պետությունները կարող են սահմանել՝

ա) 5-րդ հոդվածի կիրառման համար (ամենշաբաթյա հանգստի ժամանակահատված) 14 օրը չգերազանցող վկայակոչման ժամկետ ,

բ) 6-րդ հոդվածի կիրառման համար (շաբաթական առավելագույն աշխատաժամանակ) չորս ամիսը չգերազանցող վկայակոչման ժամկետ:

7-րդ հոդվածի համաձայն տրամադրվող ամենամյա վճարվող արձակուրդի և հիվանդության պատճառով բացակայության ժամանակահատվածները չպետք է ներառվեն կամ պետք է չեզոք դեր ունենան միջին արժեքի հաշվարկում:

գ) 8-րդ հոդվածի կիրառման համար (գիշերային աշխատանքի տևողությունը) վկայակոչման ժամկետը սահմանվում է աշխատողների և գործատուների հետ խորհրդակցելուց հետո կամ կոլեկտիվ համաձայնագրերով, կամ ազգային, կամ տարածաշրջանային մակարդակով աշխատողների և գործատուների միջև կնքված համաձայնագրերով:

Եթե 5-րդ հոդվածում նշված ամենշաբաթյա 24-ժամյա տևողությամբ հանգստի ժամանակահատվածը վկայակոչման ժամկետի սահմաններում է՝, այն չպետք է ներառվի միջին արժեքի հաշվարկի մեջ:

## ԳԼՈՒԽ 5

### ՇԵՂՈՒՄՆԵՐ ԵՎ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#### Հոդված 17

#### Շեղումները

1. Պատշաճորեն հաշվի առնելով աշխատողների անվտանգության և առողջության պահպանման ընդհանուր սկզբունքները՝ անդամ պետությունները կարող են շեղումներ կատարել 3-6, 8-րդ և 16-րդ հոդվածներից, երբ հաշվի առնելով համապատասխան գործունեության կոնկրետ առանձնահատկությունները, աշխատաժամանակը չի չափվում և(կամ) նախասահմանվում կամ կարող է սահմանվել հենց աշխատողների կողմից և, մասնավորապես.

ա) ղեկավարների և ինքնուրույն որոշում կայացնելու լիազորություն ունեցող այլ անձանց կողմից,

բ) ընտանեկան ձեռնարկություններում աշխատողների կողմից, կամ

գ) եկեղեցիներում ու կրոնական համայնքներում կրոնական արարողությունների ընթացքում իրենց ծառայողական պարտականությունները կատարող աշխատողների կողմից:

2. 3-րդ, 4-րդ և 5-րդ պարբերություններով նախատեսված շեղումները կարող են ընդունվել օրենքների, կանոնակարգերի, վարչական ակտերի, կոլեկտիվ համաձայնագրերի կամ աշխատողների և գործատուների միջև կնքված համաձայնագրերի միջոցով՝ պայմանով, որ համապատասխան աշխատողներին, որպես փոխհատուցում, տրամադրվի նույն տևողությամբ հանգիստ կամ որ բացառիկ դեպքերում, եթե օբյեկտիվ պատճառներով հնարավոր չէ նման հանգիստ տրամադրել, ապա համապատասխան աշխատողներին տրամադրվի համապատասխան պաշտպանություն:

3. Սույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ և 16-րդ հոդվածներից կարող են շեղումներ կատարվել հետևյալ դեպքերում՝

ա) երբ աշխատողի աշխատանքի, այդ թվում՝ օՖշորային աշխատանքի վայրը և բնակության վայրը հեռու են գտնվում իրարից կամ երբ աշխատողի տարբեր աշխատանքների վայրերը հեռու են գտնվում միմյանցից,

բ) անվտանգության և վերահսկողության հետ կապված աշխատանքի դեպքում, երբ սեփականության ու մարդկանց անվտանգությունը պաշտպանելու համար պահանջվում է աշխատողի մշտական ներկայություն. խոսքը վերաբերում է, մասնավորապես, անվտանգության աշխատակիցներին և պահակներին կամ անվտանգության ապահովմամբ զբաղվող ընկերություններին,

գ) արտադրության և սպասարկման շարունակականության ապահովման անհրաժեշտություն ունեցող գործունեության տեսակների,, մասնավորապես՝

i) հիվանդանոցների կամ նմանատիպ հաստատությունների կողմից ընդունարանում կատարվող աշխատանքների, բուժման և (կամ) խնամքի հետ կապված ծառայությունների, այդ թվում՝ ուսումնական հաստատություններում, կացարաններում և կալանավայրերում բժիշկների կատարած աշխատանքի դեպքում,

ii) նավահանգստում կամ օդանավակայանում իրականացվող աշխատանքների դեպքում.

iii) մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության, կինեմատոգրաֆիայի, փոստային սպասարկման և հեռահաղորդակցության ծառայությունների, շտապօգնության, հրշեջ և քաղաքացիական պաշտպանության ծառայությունների դեպքում.

iv) գազամատակարարման, ջրամատակարարման և էլեկտրաէներգիայի արտադրության, փոխադրման ու բաշխման, կենցաղային աղբահավաքման և աղբայրոցային կայանների աշխատանքների դեպքում.

v) արդյունաբերության այն տեսակների դեպքում, որի ժամանակ տեխնիկական պատճառներով հնարավոր չէ ընդհատել աշխատանքը .

vi ) գիտահետազոտական և փորձա-կոնստրուկտորական աշխատանքների դեպքում.

vii) գյուղատնտեսական աշխատանքների դեպքում.

viii) քաղաքային տրանսպորտով ուղևորների փոխադրման կանոնավոր ծառայություններ մատուցող աշխատողների գործունեության դեպքում.

դ) երբ աշխատանքի ծավալի ավելացում է կանխատեսվում, մասնավորապես, հետևյալ բնագավառներում՝

i) գյուղատնտեսություն,

ii) զբոսաշրջություն,

iii) փոստային ծառայություններ.

ե) երկաթուղային տրանսպորտի ոլորտում աշխատողների դեպքում.

i) ում գործունեությունն ընդհատվող բնույթ ունի.

ii) ովքեր իրենց աշխատաժամանակն անցկացնում են գնացքներում կամ

iii) ում գործունեությունը կապված է տրանսպորտային գրաֆիկի և փոխադրումների շարունակականության ու պարբերականության ապահովման հետ.

զ) 89/391/ԵՏՀ հրահանգի 5(4) հոդվածում նկարագրված հանգամանքներում.

է) պատահարի կամ պատահարի անխուսափելի վտանգի դեպքում:

4. Սույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ 3-րդ և 5-րդ հոդվածներից կարող են շեղումներ կատարվել՝

ա) հերթափոխային աշխատանքի դեպքում՝ ամեն անգամ, երբ աշխատողը հանձնում է հերթափոխը և չի կարող ամենօրյա և (կամ) ամենշաբաթյա հանգստի ժամանակահատվածներ վերցնել հերթափոխության ավարտից մինչև հաջորդ հերթափոխության սկիզբն ընկած ժամանակահատվածում.

բ) գործունեության այն տեսակների դեպքում, երբ աշխատանքը բաշխված է ըստ օրվա որոշակի ժամանակահատվածների, մասնավորապես, մաքրող անձնակազմի կողմից իրականացվող գործունեության դեպքում:

5. Սույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ վերապատրաստում անցնող բժիշկների դեպքում 6-րդ և 16(բ) հոդվածներից կարելի է շեղումներ կատարել՝ սույն պարբերության երկրորդից յոթերորդ ենթապարբերություններով սահմանված դրույթների համաձայն:

6-րդ հոդվածի մասով՝ առաջին ենթապարբերության մեջ նշված շեղումները թույլատրվում են 2004 թվականի օգոստոսի 1-ից հետո ընկած հինգ տարի տևող անցումային ժամանակահատվածում:

Առողջապահական ծառայությունների և բուժօգնության կազմակերպման ու ապահովման մասով իրենց պարտականությունների վերաբերյալ դրույթների հետ համապատասխանության ապահովման ժամանակ հանդիպած դժվարությունները հաշվի առնելու համար, անհրաժեշտության դեպքում, անդամ պետություններին կարող են տրվել մինչև երկու լրացուցիչ տարիներ: Անցումային ժամանակաշրջանի ավարտից առնվազն վեց ամիս առաջ, համապատասխան անդամ պետությունը տեղեկացնում է Հանձնաժողովին՝ ներկայացնելով իր հիմնավորումները, որպեսզի համապատասխան խորհրդակցություններից հետո Հանձնաժողովը կարողանա եզրակացություն ներկայացնել՝ նման տեղեկություն ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում: Եթե անդամ պետությունը չի հետևում Հանձնաժողովի եզրակացությանը, այն հիմնավորում է իր որոշումը: Անդամ պետության ծանուցման ու ներկայացրած հիմնավորման տեքստը, ինչպես նաև Հանձնաժողովի եզրակացությունը հրապարակվում են Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում և ուղարկվում են Եվրոպական պառլամենտ:

Անդամ պետություններին անհրաժեշտության դեպքում կարող է տրվել մինչև մեկ տարի տևողությամբ լրացուցիչ ժամանակահատված՝ վերջիններիս կողմից երրորդ ենթապարբերության մեջ նշված պարտականությունների կատարման ընթացքում առաջացած հատուկ դժվարությունները հաշվի առնելու համար: Նրանք հետևում են այդ ենթապարբերությամբ սահմանված ընթացակարգին:

Անդամ պետություններն ապահովում են, որ անցումային ժամանակահատվածի առաջին երեք տարվա ընթացքում շաբաթական աշխատաժամերի թիվը ոչ մի դեպքում չգերազանցի միջինը 58 ժամը, հաջորդ երկու տարվա ընթացքում՝ միջինը 56 ժամը և մնացած ժամանակահատվածի ընթացքում՝ միջինը 52 ժամը:

Գործատուն ողջամիտ ժամկետում խորհրդակցում է աշխատողների ներկայացուցիչների հետ՝ հնարավորության դեպքում, անցումային ժամանակաշրջանի վերաբերյալ պայմանավորվածությունների շուրջ համաձայնության գալու նպատակով: Հինգերորդ ենթապարբերությամբ սահմանված սահմանափակումների շրջանակներում, նման համաձայնությունը կարող է տարածվել՝

- ա) անցումային ժամանակաշրջանում շաբաթական աշխատաժամերի միջին թվի վրա և
- բ) այնպիսի միջոցների վրա, որոնք պետք է ընդունվեն՝ շաբաթական աշխատաժամերը մինչև միջինը 48 ժամ դարձնելու նպատակով:



16(բ) հողվածի մասով՝ առաջին ենթապարբերության մեջ նշված շեղումները թույլատրվում են՝ պայմանով, որ հինգերորդ ենթապարբերությամբ սահմանված անցումային ժամանակաշրջանի առաջին հատվածի ընթացքում վկայակոչման ժամկետը չի գերազանցի 12 ամիսը, իսկ դրանից հետո՝ վեց ամիսը:

### *Հոդված 18*

#### **Կոլեկտիվ համաձայնագրերում արված շեղումները**

3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ և 16-րդ հոդվածներից կարող են շեղումներ արվել կոլեկտիվ համաձայնագրերի կամ աշխատողների և գործատուների միջև ազգային կամ տարածաշրջանային մակարդակով կնքված համաձայնագրերի միջոցով կամ, դրանցով սահմանված կանոններին համապատասխան, ինչպես նաև ավելի ցածր մակարդակով՝ աշխատողների և գործատուների միջև կնքված կոլեկտիվ համաձայնագրերի միջոցով:

Այն անդամ պետություններին, որոնցում բացակայում է սույն Հրահանգով կարգավորվող խնդիրների վերաբերյալ կոլեկտիվ համաձայնագրերի կամ աշխատողների և գործատուների միջև համաձայնագրերի կնքման պարտադիր համակարգ կամ այն անդամ պետություններին, որոնցում այս նպատակով գործում է հատուկ օրենսդրական համակարգ, այդ համակարգի սահմաններում ազգային օրենսդրության և (կամ) գործելակերպի համաձայն, կարող է 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ և 16-րդ հոդվածներից՝ կոլեկտիվ համաձայնագրերի կամ աշխատողների և գործատուների միջև կնքված համաձայնագրերի միջոցով համապատասխան կոլեկտիվ մակարդակով շեղում կատարելու հնարավորություն տրվել:

Առաջին և երկրորդ ենթապարբերություններով նախատեսված շեղումները թույլատրելի են պայմանով, որ համապատասխան աշխատողներին, որպես փոխհատուցում, տրվեն հանգստի միևնույն տևողությամբ ժամանակահատվածներ կամ այն բացառիկ դեպքերում, երբ դա օբյեկտիվ պատճառներով հնարավոր չէ, համապատասխան աշխատողներին տրամադրվի պատշաճ պաշտպանություն:

Անդամ պետությունները կարող են սահմանել կանոններ՝

ա) աշխատողների և գործատուների կողմից սույն հոդվածի կիրառման վերաբերյալ, և

բ) ազգային օրենսդրության և (կամ) գործելակերպի համաձայն՝ մյուս աշխատողների նկատմամբ կոլեկտիվ համաձայնագրերի կամ սույն հոդվածին համապատասխան կնքված համաձայնագրերի դրույթների տարածման վերաբերյալ:

### *Հոդված 19*

#### **Վկայակոչման ժամկետներից շեղումներ կատարելու սահմանափակումները**

17(3) և 18-րդ հոդվածներով նախատեսված՝ 16(բ) հոդվածից շեղում կատարելու ընտրության հնարավորությունը չի կարող հանգեցնել վեց ամիսը գերազանցող տևողությամբ վկայակոչման ժամկետ սահմանելուն:

Այդուհանդերձ, անդամ պետությունները աշխատողների անվտանգության և առողջության պահպանման հիմնական սկզբունքներին համապատասխանելու պայմանով և աշխատանքի կազմակերպմանն առնչվող օբյեկտիվ կամ տեխնիկական պատճառներով հնարավորություն ունեն թույլատրելու, որպեսզի կոլեկտիվ համաձայնագրերում կամ աշխատողների և գործատուների միջև կնքված համաձայնագրերում վկայակոչման ժամկետը 12 ամիսը ոչ մի դեպքում չգերազանցող տևողությամբ սահմանվի:

Խորհուրդը, մինչև 2003 թվականի նոյեմբերի 23-ը, Հանձնաժողովի առաջարկության և դրան կից ներկայացված գնահատման հաշվետվության հիման վրա կրկին ուսումնասիրում է սույն հոդվածի դրույթները և որոշում՝ ինչ գործողություն ձեռնարկել:

### *Հոդված 20*

#### **Շրջագայող աշխատողները և օֆշորային աշխատանքը**

1. 3-րդ, 4-րդ, 5-րդ և 8-րդ հոդվածները չեն կիրառվում շրջագայող աշխատողների նկատմամբ:

Այդուհանդերձ, անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար շրջագայող աշխատողների համապատասխան հանգստի իրավունքը՝ բացառությամբ 17(3) հոդվածի (գ) և (ե) կետերով սահմանված հանգամանքների:

2. Աշխատողների անվտանգության և առողջության պահպանման հիմնական սկզբունքներին համապատասխանելու և համապատասխան գործատուի ու աշխատողների ներկայացուցիչների միջև խորհրդակցության անցկացման, ինչպես նաև սոցիալական երկխոսության բոլոր ձևերի խրախուսման՝ այդ թվում կողմերի համաձայնության դեպքում բանակցությունների անցկացման պայմանով անդամ պետությունները, օբյեկտիվ կամ տեխնիկական և կամ աշխատանքի կազմակերպմանն առնչվող պատճառներով, 16(բ) հոդվածում նշված վկայակոչման ժամկետը կարող են երկարաձգել մինչև 12 ամիս՝ հիմնականում օֆշորային աշխատանք կատարող աշխատողների դեպքում:

3. Հանձնաժողովը 2005 թվականի օգոստոսի 1-ից ոչ ուշ, անդամ պետությունների, ինչպես նաև կազմակերպությունների աշխատակազմի ղեկավար և շարքային ներկայացուցիչների հետ եվրոպական մակարդակով խորհրդակցություն անցկացնելուց հետո անհրաժեշտության դեպքում համապատասխան փոփոխություններ կատարելու նպատակով ուսումնասիրում է օֆշորային աշխատողներին վերաբերող դրույթների կիրառումը՝ վերջիններիս առողջության և անվտանգության պահպանման տեսանկյունից:

## *Հոդված 21*

### **Ծովային ձկնորսական նավերի աշխատողները**

1. 3- 6-րդ, ինչպես նաև 8-րդ հոդվածները չեն կիրառվում անդամ պետության դրոշմ կրող ծովային ձկնորսական նավի որևէ աշխատողի նկատմամբ:

Այդուհանդերձ, անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ անդամ պետության դրոշմ կրող ծովային ձկնորսական նավի ցանկացած աշխատողի բավարար հանգստի իրավունքն ապահովելու և աշխատաժամերի թիվը 12 ամիսը չգերազանցող տևողությամբ վկայակոչման ժամկետի կտրվածքով հաշվարկվածի համաձայն միջինը մինչև շաբաթական 48 ժամ սահմանափակելու համար:

2. 1-ին պարբերության 2-րդ ենթապարբերությամբ, ինչպես նաև 3-րդ և 4-րդ պարբերություններով սահմանվածի շրջանակներում անդամ պետությունները, ելնելով աշխատողների անվտանգության և առողջության պահպանման անհրաժեշտությունից, ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ՝

ա) աշխատաժամերը սահմանափակվեն սահմանված առավելագույն ժամաքանակով, որը չի կարելի գերազանցել որոշակի ժամանակահատվածի ընթացքում, կամ

բ) որոշակի ժամանակահատվածի ընթացքում սահմանված նվազագույն ժամերի թվով հանգիստ նախատեսվի:

Աշխատաժամերի առավելագույն կամ հանգստի նվազագույն ժամերի թիվը սահմանվում է օրենքով, կանոնակարգերով, վարչական ակտերով կամ կոլեկտիվ համաձայնագրերով կամ աշխատողների ու գործատուների միջև կնքված համաձայնագրերով:

3. Աշխատանքի կամ հանգստի ժամերի թիվը պետք է լինի կամ՝

ա) աշխատաժամերի այն առավելագույն թիվը, որը չի կարող գերազանցել՝

i) ցանկացած 24-ժամյա ժամանակահատվածի ընթացքում՝ 14 ժամը և

ii) ցանկացած յոթօրյա ժամանակահատվածի ընթացքում՝ 72 ժամը,

կամ

բ) հանգստի համար սահմանված նվազագույն ժամերի թիվը, որը պետք է լինի ոչ պակաս, քան՝

i) ցանկացած 24-ժամյա ժամանակահատվածի ընթացքում՝ 10 ժամը և

ii) ցանկացած յոթօրյա ժամանակահատվածի ընթացքում՝ 77 ժամը:

4. Հանգստի ժամերը կարող են բաժանվել առավելագույնը երկու ժամանակահատվածի, որոնցից մեկը՝ առնվազն վեց ժամ տևողությամբ, իսկ հերթական հանգստի ժամանակահատվածների միջև տևողությունը չպետք է գերազանցի 14 ժամը:

5. Աշխատողների անվտանգության և առողջության պահպանման հիմնական սկզբունքների համաձայն և օբյեկտիվ, տեխնիկական կամ աշխատանքի կազմակերպմանն առնչվող պատճառներով, անդամ պետությունները կարող են բացառություններ թույլ տալ, այդ թվում՝ վկայակոչման ժամկետ սահմանել 1-ին պարբերության երկրորդ ենթապարբերությամբ, ինչպես նաև 3-րդ և 4-րդ պարբերություններով սահմանված չափով: Նման բացառությունները հնարավորության սահմաններում պետք է համապատասխանեն սահմանված չափորոշիչներին, սակայն

դրանցում կարող են հաշվի առնվել աշխատողներին ավելի հաճախ և ավելի երկար տևողությամբ արձակուրդի ժամանակահատված, ինչպես նաև՝ որպես փոխհատուցում տրվող արձակուրդ տրամադրելու հարցերը:

Այդ բացառությունները կարող են սահմանվել՝

ա) օրենքներով, կանոնակարգերով կամ վարչական ակտերով՝ համապատասխան գործատուների և աշխատողների ներկայացուցիչների միջև հնարավորության դեպքում խորհրդակցության անցկացման և սոցիալական երկխոսության բոլոր համապատասխան ձևերի խրախուսման պայմանով կամ

բ) կոլեկտիվ համաձայնագրերով կամ աշխատողների և գործատուների միջև կնքված համաձայնագրերով:

6. Ծովային ձկնորսական նավի տերն իրավունք ունի նավի աշխատողներից պահանջելու աշխատել այնքան ժամ, որքան անհրաժեշտ է՝ նավի, տախտակամածի վրա գտնվող անձանց կամ բեռների անմիջական անվտանգությունն ապահովելու, կամ աղետալի վիճակում հայտնված այլ նավերի,, կամ անձանց ծովում օգնություն ցույց տալու համար:

7. Անդամ պետություններն այն աշխատողների համար, ովքեր աշխատում են ծովային ձկնորսական այն նավերի վրա, որոնց շահագործումը ազգային օրենսդրությամբ և (կամ) գործելակերպով չի թույլատրվում օրացուցային տարվա՝ մեկ ամիսը չգերազանցող հատուկ ժամանակահատվածի ընթացքում, կարող են նախատեսել, որ այդ աշխատողներն իրենց ամենամյա արձակուրդը վերցնեն այդ ժամանակահատվածում՝ 7-րդ հոդվածի համաձայն:

## *Հոդված 22*

### **Այլ դրույթներ**

1. Աշխատողների անվտանգության և առողջության պահպանման հիմնական սկզբունքները պահպանելիս յուրաքանչյուր անդամ պետություն հնարավորություն ունի իր ընտրությամբ չկիրառելու 6-րդ հոդվածը՝ պայմանով, որ այն ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ՝

ա) ոչ մի գործատու իր աշխատողից չպահանջի յոթօրյա ժամանակահատվածում աշխատել 48 ժամից ավելի, որը 16(բ) հոդվածում նշված վկայակոչման ժամկետի համար հաշվարկված է որպես միջին արժեք, եթե նա նախապես աշխատողից նման աշխատանք կատարելու համաձայնություն չի ստացել:

բ) ոչ մի աշխատող իր գործատուի կողմից վնաս չկրի՝ նման աշխատանք կատարելու համաձայնություն չտալու համար:

գ) գործատուն պահի նման աշխատանք կատարող բոլոր աշխատողների թարմացված տվյալները:

դ) տվյալները գտնվեն իրավասու մարմինների տրամադրության տակ, որոնք, աշխատողների անվտանգության և (կամ) առողջության պահպանման պատճառներից ելնելով, կարող են արգելել կամ սահմանափակել շաբաթական աշխատաժամերի առավելագույն թիվը գերազանցելու հնարավորությունը:

ե) գործատուն իրավասու մարմիններին՝ վերջիններիս պահանջով, տրամադրում է տեղեկություններ այն դեպքերի մասին, երբ աշխատողները տվել են իրենց համաձայնությունը յոթօրյա ժամանակահատվածում աշխատել 48 ժամից ավելի, որը 16(բ) հոդվածում նշված վկայակոչման ժամկետի համար հաշվարկված է որպես միջին արժեք:

Մինչև 2003 թվականի նոյեմբերի 23-ը Խորհուրդը, Հանձնաժողովի կողմից կատարված առաջարկության և դրան կցված գնահատման հաշվետվության հիման վրա, կրկին ուսումնասիրում է սույն պարբերության դրույթները և որոշում՝ ինչ գործողություն ձեռնարկել:

2. Անդամ պետությունները, 7-րդ հոդվածի կիրառման առումով, ունեն ընտրության հնարավորություն՝ օգտագործելու երեք տարուց ոչ ավելի տևողությամբ անցումային ժամանակաշրջանը՝ սկսած 1996 թվականի նոյեմբերի 23-ից՝ պայմանով, որ այդ անցումային ժամանակահատվածում՝

ա) յուրաքանչյուր աշխատող ունենա երեք շաբաթ տևողությամբ վճարովի արձակուրդի իրավունք՝ ազգային իրավունքով և (կամ) գործելակերպով սահմանված նման արձակուրդի իրավունքի և տրամադրման պայմանների համաձայն, և

բ) երեք շաբաթ տևողությամբ վճարովի արձակուրդի նվազագույն տևողությունը չի կարող փոխարինվել գումարով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատանքային հարաբերություններն ավարտվել են:

3. Եթե անդամ պետություններն օգտվում են սույն հոդվածով նախատեսված ընտրության հնարավորություններից, նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

## **ԳԼՈՒԽ 6**

### **ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

#### *Հոդված 23*

#### **Պաշտպանության մակարդակը**

Չսահմանափակելով անդամ պետությունների՝ փոփոխվող հանգամանքների լույսի ներքո աշխատաժամանակի ոլորտում տարբեր օրենսդրական, կարգավորող կամ պայմանագրային դրույթներ մշակելու իրավունքը՝, քանի դեռ պահպանվում են սույն Հրահանգով նախատեսված նվազագույն պահանջները, սույն Հրահանգի կիրարկումը չպետք է օրինական հիմք հանդիսանա՝ աշխատողներին տրամադրվող պաշտպանության ընդհանուր մակարդակն իջեցնելու համար:

#### *Հոդված 24*

#### **Հաշվետվությունները**

1. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի դրույթների տեքստերը, որոնք արդեն ընդունվել կամ ընդունվում են նրանց կողմից՝ սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

2. Անդամ պետությունները յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ Հանձնաժողովին զեկուցում են սույն Հրահանգի դրույթների կիրարկման մասին՝ նշելով աշխատողների և գործատուների տեսակետները:

Հանձնաժողովը դրա մասին տեղեկացնում է Եվրոպական պառլամենտին, Խորհրդին, Եվրոպական տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեին ու Աշխատավայրում

անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեին:

3. 1996 թվականի նոյեմբերի 23-ից սկսած՝ յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ, Խորհուրդ, Եվրոպական տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտե հաշվետվություն է ներկայացնում սույն Հրահանգի կիրառման մասին՝ հաշվի առնելով 22-րդ և 23-րդ հոդվածներն ու սույն հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունները:

#### *Հոդված 25*

### **Ծովային ձկնորսական նավերի աշխատողներին վերաբերող դրույթների կիրառման նկատմամբ վերահսկողությունը**

2009 թվականի օգոստոսի 1-ից ոչ ուշ Հանձնաժողովը, անդամ պետությունների և ղեկավարության ու աշխատողների հետ եվրոպական մակարդակով խորհրդակցելուց հետո, ուսումնասիրում է ծովային ձկնորսական նավերի տախտակամածներին աշխատողների առողջությանն ու անվտանգությանը վերաբերող դրույթների գործածությունը և, մասնավորապես, ուսումնասիրում, թե արդյոք այդ դրույթները պահպանվում են, մասնավորապես, անվտանգության և առողջության ոլորտում՝ անհրաժեշտության դեպքում անհրաժեշտ լրացումներ և փոփոխություններ մտցնելու նպատակով:

#### *Հոդված 26*

### **Ուղևորների փոխադրման հետ կապված աշխատողներին վերաբերող դրույթների գործածության ուսումնասիրումը**

Հանձնաժողովը 2005 թվականի օգոստոսի 1-ից ոչ ուշ՝ անդամ պետությունների և կազմակերպությունների աշխատակազմի ղեկավար և շարքային ներկայացուցիչների հետ եվրոպական մակարդակով խորհրդակցություն անցկացնելուց հետո վերահսկողություն է սահմանում քաղաքային տրանսպորտով ուղևորների փոխադրմանը վերաբերող դրույթների կիրառման նկատմամբ՝ նպատակ ունենալով տվյալ ոլորտում ապահովելու համակարգված և համապատասխան մոտեցում ու, անհրաժեշտության դեպքում, համապատասխան փոփոխություններ կատարել:



## *Հոդված 27*

### **Ուժը կորցրած ճանաչելը**

1. I հավելվածի Ա մասում նշված Հրահանգով փոփոխված 93/104/ԵՀ հրահանգը պետք է ուժը կորցրած ճանաչվի՝ առանց սահմանափակելու I հավելվածի Բ մասով սահմանված փոխատեղման ժամկետների նկատմամբ անդամ պետությունների պարտավորությունները:

2. Ուժը կորցրած հրահանգներին կատարված հղումները մեկնաբանվում են որպես սույն Հրահանգին կատարվող հղումներ և ընթերցվում II հավելվածով սահմանված համեմատական աղյուսակի համաձայն:

## *Հոդված 28*

### **Ուժի մեջ մտնելը**

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում 2004 թվականի օգոստոսի 2-ից:

## *Հոդված 29*

### **Հասցեատերերը**

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում 2003 թվականի նոյեմբերի 4-ին: